

գումարուած էր, մասնակցութեամբ բոլոր մեծամեծներու եւ բարձրաստիճան անձերու, խորհրդակցելու համար իրենց բռնելիք դիրքին վրայ, ներկայ էին Ֆրանսայի եւ Հայոց թագաւորները, Կարոլոսի եղբայրը՝ Լուդովիկոս, հօրեղբայրներն ու մօրեղբայրը, Իշխաններու կարծիքն էր այլ եւս չխօսիլ խաղաղութեան ու զինադադարի վրայ, այլ վրէժ լուծել Անգլիացիներէ: « Բայց որովհետեւ հակառակ կարծիք ունեցողները քիչ էին, ազաչեցին Հայոց թագաւորին որ ինքն առաջարկէ իրենց պատճառաբանութիւնները, որպէս զի լաւ եւս ունկնդրութիւն գտնէին(1): » Լեւոն մինչեւ այն ժամանակ չէր մասնակցած վիճաբանութիւններու, որովհետեւ — ինչպէս Սէն-Դրնիի վերոյիշեալ կրօնաւորը կըսէ(2) — Ֆրանսերէնը զժուարութիւնով կը խօսէր եւ լատիներէն ալ քիչ գիտէր(3): Բայց վերջապէս բացաւ բերանն եւ հետեւեալ ճառն արտասանեց .

« Թէպէտ եւ ես ձեր կարծիքէն չեմ, մեծապայծառ դքսեր եւ իշխաններ, բայց այսու չեմ կրնար չի գովել անոր վեհանճնութիւնը, եւ թագաւորն ինձ պիտի ներէ, եթէ կը համարձակիմ ըսելու իրեն՝ թէ այդ խորհուրդը զոր իրեն կուտաք, իրեն համար շահաւէտ, եւ ձեզ՝ փառաւոր նշանակ մ'է այն ազնիւ բարկութեան, որ զձեզ կը վառէ՝ առ ձեզ եղած անիրաւութեանց վրէժը խնդրելու: Իրաւացի է, չունիմ ըսելիք մի . բայց այս միայն կը փափաքիմ, Տեարք, որ աղոնք նուազ արագութեամբ գործուին, որպէս զի կըզին օգտաւէտ ըլլան, նախ քան զպատերազմ՝ անոնց ըրած անիրաւութիւնը ցուցնելով: Եթէ ճշմարիտ է, որ այնչափ անգամ դրժեր

(1) Le Laboureur. *Hist. de Charles VI*. գիրք 2, գլ. Ա: Այս գործը Սեն-Դրնիի կրօնաւորէն գրուած լիեալ ժամանակագիրքին մէկ հին քարգմանութիւնն է, որուն մէջ Հայոց մասին գտնուած կտորները զրկած եմ *Բագմալիկային*, որ 1897-ի փետր.-մարտ Յաւելուածով քարգմանած եւ հրատարակած է:

(2) *Chronique du Religieux de Saint-Denys*, fcs. Ա, եր. 421:

(3) Անհաւասարի բուի քերեսու, որ Լեւոն Ֆրանսաւայ սօսմէ սեռած եւ Ֆրանսացի կնոջ մը հետ ամուսնացած ըլլալով հանդերձ չկարենայ խօսիլ Ֆրանսերէն. միւս կողմէ ալ պէտք է գիտնալ քի մայրը վրացի էր եւ Ֆրանսերէնի անծանօթ, հետեւաբար մայրենի լեզուն՝ ինչպէս նաեւ արժունիքի մէջ գործածուածը՝ հայերէնն էր. իսկ Ֆրանսերէնն ու լատիներէնն իբրեւ պաշտօնական լեզուներ ընդունուած էին արտաքին յարաբերութիւններու համար, ինչպէս Անիօրի եւ Եդեսիայի Ֆրանկ իշխանութիւններն ալ հայերէնի մշակման զարկ տուած էին ժամանակին, իրենց արտաքին պէտքերուն համար: